

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից 2017 թվականին իրականացված աշխատանքների

**1. Աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված աուդիտի առաջադրանքների քանակի, այդ թվում՝ բարձր ռիսկային համարված առաջադրանքների քանակի վերաբերյալ տեղեկատվություն.** Ներքին աուդիտի 2017 թվականի տարեկան ծրագրով սահմանվել է թվով 17 աուդիտի առաջադրանք, այդ թվում՝ համակարգի գնահատման՝ 4, կատարողականի՝ 11 և համապատասխանության 2 (այդ թվում՝ գնումների՝ 1):

Բարձր ռիսկային համարված առաջադրանքների քանակը՝ 8:

**2. 1-ին կետով ներկայացված առաջադրանքների մեկնարկի ժամկետների ուշացումների, չկատարված առաջադրանքների քանակի և դրանց պատճառների վերաբերյալ տեղեկատվություն.** Առաջադրանքների մեկնարկների ժամկետների ուշացումներ չեն արձանագրվել: Չի կատարվել 1 առաջադրանք (համապատասխանության աուդիտ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչություն) պայմանավորված ներքին աուդիտի բաժնի աշխատակազմի թվաքանակի սակավությամբ (որոշ ներքին աուդիտորների աշխատանքից չալանավորված բացակայությամբ):

**3. Չալանավորված առաջադրանքների իրականացման քանակի և դրանց իրականացման հիմնավորումների վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով նման առաջադրանքների տեսակարար կշիռը ընդհանուր առաջադրանքներում.** Իրականացվել է թվով 1 չալանավորված առաջադրանք (ՀՀ պետական բյուջեից նպատակային նվիրաբերություն ստացող «Սևան» մարզական հասարակական կազմակերպությունում), որտեղ իրականացվել է վերստուգում, պայմանավորված նախորդ ժամանակշրջանում (2016 թ.) իրականացված աուդիտի արդյունքներով կազմված գործողությունների ծրագրով նշված առաջարկությունների կատարման, թերությունների շտկման վերստուգման նպատակով, ինչպես նաև իրականացվել են հայտնաբերված թերությունների ընթացիկ տարում. կրկնման դեպքերի բացահայտման գործընթացներ:

**4. 2017 թվականի ընթացքում իրականացված աուդիտի առաջադրանքների արդյունքում աուդիտորի կողմից ներկայացված առաջարկությունների (միջոցառումների), այդ թվում՝ մարմնի ղեկավարի կողմից ընդունելի համարված առաջարկությունների քանակի և տրված հանձնարարականների, ինչպես նաև 80 և ավելի տոկոսով կատարված միջոցառումների ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն.** 80 և ավելի տոկոսով կատարված միջոցառումների ծրագրերը թվով 8-ն են: 2017 թվականի ընթացքում իրականացված 16 աուդիտների արդյունքներով արվել է թվով 227 առաջարկություն (միջոցառումներ), որից՝ 115 առաջարկությունները (51%) կատարվել են նախատեսված ժամկետներում, իսկ մնացած՝ 112 առաջարկությունները (49%) չեն կատարվել, որից 57-ի (կամ չկատարվածի շուրջ 51%) դեպքում ընդհանրապես ոչինչ չի

արվել, 55-ն էլ (կամ չկատարվածի շուրջ 49%) հանդիսանում են շարունակական կատարման ենթակա առաջարկություններ:

Չկատարված հիմնական առաջարկություններից են, մասնավորապես՝

1) անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման դանդաղում, կապված անշարժ գույքը լիազոր մարմինն փոխանցելու և նրանից անհատույց օգտագործման իրավունքով ստանալու հետ (չկատարումը պայմանավորվել է միջոցների բացակայությամբ)։

2) պետական բյուջեից հատկացումների հաշվին ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություններում գնման գործընթացների կազմակերպում։

3) հաշվապահական ծառայությունների և մարդկային ռեսուրսների պատասխանատուների մասնագիտական կարողությունների զարգացման (վերապատրաստման) գործընթացների կազմակերպման չկատարում։

4) ճշգրտման կամ ուղղման չենթարկվող (տվյալ ժամանակահատվածում) առաջարկությունները ընդունվել են ի գիտություն՝ հետագայում նույն թերությունները, կամ բացթողումները բացառելու և չկրկնելու համար:

**5. 2016 թվականին իրականացված աուդիտի արդյունքներով բացահայտված այն ռիսկերի կամ խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն, որոնք շարունակել են առկա լինել նաև 2017 թվականի ընթացքում.**

1. Աուդիտի ենթակա միավորների հաշվապահական ծառայությունների և մարդկային ռեսուրսների պատասխանատուների թույլ կարողություններ, որը պայմանավորված է՝

ա) մասնավորապես՝ ՀՀ մարզերում որակյալ կադրերի սահմանափակությամբ.

բ) վարձատրության չափի պակաս մրցունակ լինելու հանգամանքով պայմանավորված որակյալ կադրերի համար աշխատանքի գրավչության պակասով:

2. Աուդիտի ենթակա միավորների հաշվապահական ծառայությունների և մարդկային ռեսուրսների պատասխանատուների թույլ կարողություններով պայմանավորված թերի հաշվապահական հաշվառում, թերի հսկողական համակարգեր ու թույլ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգեր (կառավարման կանոնակարգերի և ընթացակարգերի բացակայություն):

3. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ՊՈԱԿ-ներում գնումների գործընթացների գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից շեղումներով իրականացում (հիմնականում ԲԸԱՀ ընթացակարգով գնման պահանջների չկատարում):

4. Կազմակերպությունների անհատույց օգտագործման և սեփականության իրավունքով գույքի (անշարժ, շարժական գույք, մարզագույք) պահպանման ծախսերի բացակայությամբ պայմանավորված դրանց շահագործման ժամկետների արագացված մաշվածություն:

**6. Ամենախոշոր 3 առկա ռիսկերը և դրանց նկարագրերը.**

1. Աուդիտի ենթակա միավորների հաշվապահական ծառայությունների և մարդկային ռեսուրսների պատասխանատուների թույլ կարողություններ (պայմանավորված են՝ ա) մարզերում որակյալ կադրերի սահմանափակությամբ, բ) վարձատրության չափի պակաս մրցունակ լինելու հանգամանքով):

2. Պետական բյուջեից հատկացումների հաշվին ծրագրեր իրականացնող կազմակերպություններում (այդ թվում՝ պետական աջակցություն ստացած) ապրանքի, աշխատանքի և ծառայության գնման ընթացակարգերի ՀՀ օրենսդրության պահանջների չկատարելը:

3. Ուսումնամարզական գործունեություն իրականացնող կազմակերպություններում պետական գույքի (անշարժ գույք, մարզական սարքավորումներ) պահպանությանն ուղղվող միջոցների սահմանափակությամբ պայմանավորված այդ գույքի ֆիզիկական արագացված մաշվածություն, որը կարող է հանգեցնել վաղաժամկետ կորստի: Մարզագույքերի պակասով պայմանավորված ուսումնամարզական գործընթացների արդյունավետության նվազում և որակական առաջընթացի ցուցանիշների սահմանափակում:

**7. Աուդիտի ենթարկված միավորների ղեկավարների ու աշխատակիցների պատրաստակամության աստիճանը համագործակցելու աուդիտի խմբի հետ (անբավարար, ցածր, միջին, լավ գերազանց).** Լավ (ինչպես նախորդ տարվա ընթացքում՝ աուդիտի ենթարկված համարյա բոլոր միավորներում դրական գնահատականի է արժանացել աուդիտի անցկացումը՝ կարևորվել է աուդիտի ընթացքում աուդիտորների կողմից կառավարչական, ֆինանսատնտեսական և ուսումնամարզական գործունեության կանոնակարգման և ՀՀ օրենսդրության շրջանակների որոշման հարցերում աուդիտորական խմբի խորհրդատվության մատուցումը):

**8. Աուդիտի ստորաբաժանման հաստիքների բավարարություն և համալրվածության մակարդակ.** Ներքին աուդիտի բաժինը ունի մարդկային ռեսուրսներով համալրման կարիք: Հաշվի առնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի աուդիտի ենթակա միավորների թվաքանակը (ավելի քան 85), ինչպես նաև համակարգի գործունեության բազմազանությունը (ուսումնամարզական, մարզական և երիտասարդական միջոցառումներ) և առանձնահատկությունները (պետականորեն սահմանված ուսումնամարզական և մարզական գործընթացների կազմակերպում, մարզական հասարակական կազմակերպություններին պետական ֆինանսական աջակցություն (նվիրաբերություն), երիտասարդական միջացառումներին պետական ֆինանսական աջակցություն), վերը նշված ծավալի աշխատանքների իրականացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար նպատակահարմար է ներքին աուդիտի բաժնի ներկայի աշխատակազմն ավելացնել առնվազն 1 մասնագետով, քանի որ ներկայի մարդկային ռեսուրսները բավարարում են միայն աուդիտի համար սահմանափակ աշխատաժամանակի պլանավորմանը (2017 թվականի ընթացքում 3 մարդ/ամիս աշխատաժամանակի ռեսուրսներով աշխատանքային ծրագրով սահմանված աուդիտի առաջադրանքների ամսական միջին թիվը հավասար է եղել շուրջ 1.6-ի, չհաշված առաջադրանքների նախապատրաստման, փաստաթղթավորման, այլ ընթացիկ և չնախատեսված աշխատանքների համար անհրաժեշտ աշխատաժամանակը):

Ներքին աուդիտի բաժնի պետ՝

12.01.2018 թ.



Գ. Սարգսյան